# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 294-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի ա կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քմյունիթի Սենթր Ֆոր Դիվելոփմենթ» տարածաշրջանային համագործակցության ՀԿ նախագահ Համիկ Վազգենի Ազիբեկյանի (ն/բ 000246132, տրված 11.11.2012 թ 047-ի կողմից)՝ նկատմամբ նշանակել տուգանք 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ «Քմյունիթի Սենթր Ֆոր Դիվելոփմենթ» տարածաշրջանային համագործակցության ՀԿ-ին սեփականության իրավունքով պատկանող Նոյեմբերյան համայնքի Ջուջևան գյուղի 11-056-0207-0013 ծածկագրով տարածքի ինքնակամ շինությունը կառուցելու համար:

3. Համիկ Ազիբեկյանին՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում տուգանքը փոխանցել Նոյեմբերյանի համայնքապետարանի բանկային՝ Հ/Հ 900395101463 հաշվին:

4. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման ՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱՐԱՋՅԱՆ

2020 թ. հուլիսի 28
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
31 ՀՈՒԼԻՍԻ 2020 թվականի N 295-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 5-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նոյեմբերյան համայնքի Ոսկեվան գյուղի 7-րդ փողոց 1-ին նրբանցք 1-ին փակուղի թիվ 26 հասցեում գտնվող, 11-050-0021-0001 ծածկագրով 0.08293 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը այլ հողերից փոփոխել և դարձնելով բնակելի կառուցապատման:
2. Դիմել ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմ՝ գործառնական նշանակությունը փոփոխված հողամասի նկատմամբ որպես առանձին գույքային միավոր պետական գրանցում ստանալու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱԲԱԶՅԱՆ

2020 թ. հուլիսի 31
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2020 թվականի N 296-Ա

## ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 06.03.2002 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 35 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյանի քաղաքապետի 06.03.2002 թվականի թիվ 35 որոշումը ճանաչել ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱԲԱՋՅԱՆ

2020 թ. հուլիսի 31
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2020 թվականի N 297-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Ջուջևան բնակավայրի 11-056-0207-0013 ծածկագրով անշարժ գույքին տալ հասցե ու գրանցել՝ ՀՀ Տավուշի մարզ, համայնք Նոյեմբերյան, բնակավայր Ջուջևան «Օհանի հողեր» հանդամաս թիվ 1 հասցեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱԲԱԶՅԱՆ

2020 թ. հուլիսի 31
ք.Նոյեմբերյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 298-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի թիվ 731-Ն որոշմամբ և 912-Ն որոշման 2-րդ մասի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 16-րդ և 23-րդ կետերի պահանջով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցը չի հակասում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներին, հիմք ընդունելով ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 09.07.2020 թվականի թիվ 2/փ-62 դրական եզրակացությունը, և որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում այլ անձանց կյանքին ու առողջությանը, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հաշվի առնելով «ՔՄՅՈՒՆԻԹԻ ՍԵՆԹՐ ՖՈՐ ԴԻՎԵԼՈՓՄԵՆԹ» տարածաշրջանային համագործակցության ՀԿ նախագահ Հասմիկ Վազգենի Ազիբեկյանի 20.07.2020 թվականի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Ջուջևան բնակավայրի «Օհանի հողեր» թիվ 1 հասցեում գտնվող «ՔՄՅՈՒՆԻԹԻ ՍԵՆԹՐ ՖՈՐ ԴԻՎԵԼՈՓՄԵՆԹ» տարածաշրջանային համագործակցության ՀԿ-ին 11-056-0207-0013 ծածկագրով 0.88248 հա մակերեսով հողատարածքում (նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների) առկա 601.54 քմ արտաքին մակերեսով կառույցը՝ կաթի վերամշակման արտադրամասը ճանաչել օրինական:

1. 601.54 քմ մակերեսով կառույցի օրինականացման վճար սահմանել 397050 (երեք հարյուր իննսունյոթ հազար հիսուն) ՀՀ դրամ:
2. ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 09.07.2020 թվականի թիվ 2/փ-62 դրական եզրակացությամբ, Նոյեմբերյան համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 30-ի թիվ 72-Ա որոշմամբ 11-056-0207-0013 ծածկագրով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխված հողամասի կադաստրային արժեքը կազմում է 547140 ՀՀ դրամ (հինգ հարյուր քառասունյոթ հազար հարյուր քառասուն, 1 /մեկ/ քմ մակերսով հողամասի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը՝ 62 ՀՀ դրամ):
3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար հաշվարկված ընդհանուր գումարի չափը՝ 944190 /ինն հարյուր քառասունչորս հազար հարյուր իննսուն/ ՀՀ դրամ:
4. Որոշման ստորագրման պահից սկսած 60-օրյա ժամկետում օրինականացման համար նախատեսված 944190 /ինն հարյուր քառասունչորս հազար հարյուր իննսուն/ ՀՀ դրամ վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԱՌԱՔՅԱՆ

2020 թ. հուլիսի 31
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
31 ՀՈՒԼԻՍԻ 2020 թվականի N 299-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԾԱԽՍԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նոյեմբերյան համայնքի տարածքում կորոնավիրուսով վարակված և բժշկի ցուցումով մեկուսացված Վեներա Քառյանի ընտանիքին սննդով և սանիտարահիգենիկ պարագաներով ապահովելու համար Նոյեմբերյան համայնքի 2020 թվականի բյուջեից հատկացնել 11700 ՀՀ դրամ գումար «Արմենուհի Գուլքանյան» ԱՁ-ի միջոցով ծախսեր կատարելու նպատակով:
2. Որոշման կատարումը հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Նարինե Ղազարյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱԲԱՋՅԱՆ

2020 թ. հուլիսի 31
ք.Նոյեմբերյան